Ասլանը վերջացրել էր նամակները. նա այժմ սկսել էր կնքել ծրարները: Ճրագի լոյսը խիստ աղօտ կերպով լուսաւորում էր նրա գուլնաթափ դէմքը: Նա հագած ունէր մի տեսակ գիշերային խալաթ, եւ սենեակում տիրող տօթի պատճառով կոճակները թողել էր արձակ: Շապկի կիսաբաց օձիքից երբեմն երեւում էր նրա մերկ կուրծքը: Այն լայն, զօրաւոր կուրծքի վրան նշմարում էի ես մի ընդարձակ սպի, որը, շատ հաւանական էր, ստացել էր հրացան գործիքից: Ես մի առանձին ուշադրութեամբ նայում էի այն նշանի վրայ: Չգիտեմ, ինչո՞ւ վէրքը, սպին միշտ իմ մէջ հետաքրքրութիւն էր զարթեցնում: Երեւի նրա համար, որ նա պարունակում էր իր մէջ մարդու կեանքի մի նշանաւոր արկածի յիշատակները: Գուցէ այդ էր պատճառը, երբ նա ծրարները կողպեց պահարանի մէջ, որ առաւօտեան յանձնէ թղթատարին, եւ երբ մտաւ իր համար պատրաստած անկողինը, ես մտածեցի գոհացնել իմ հետաքրքրութիւնը: Բայց Ասլանը տարօրինակ բնաւորութիւններից մէկն էր: Երբեմն նա այնքան քաղցր էր, որ կարծես թէ շրթունքներից մեղր էր կաթում, իսկ երբեմն այն աստիճան ժանտ էր, որ կը կարծէիր, թէ աչքերից, երեսից լեղի էր թափում: Այդ րոպէներում լաւ էր չխօսել նրա հետ: Բայց ես համբերել չկարողացայ եւ համարձակոեցայ հարցնել, թէ այն ի՞նչ վէրքի նշան է, որ երեւում է նրա կուրծքի վրայ:

— Ինչո՞ւ ես հարցնում, — մաղձոտ կերպով կտրեց իմ խօսքը:

— Այնպէս... ուզում եմ իմանալ...

— Դրանից ի՞նչ օգուտ քեզ:

Ես լուռ կացայ: Նա նկատեց, որ ես վշտացայ, աւելի մեղմ կերպով ասաց ինձ.

-Ոչ ոք իրաւունք չունի ուրիշի գաղտնիքների մէջ մտնել: Եթէ դու հարցնէիր, թէ ինչպէ՞ս է կազմոած իմ կուրծքը, ո՞ր կողմումն է գտնւում իմ սիրտը եւ ի՞նչ պաշտօն է կատարում, կամ որպէ՞ս են դասաւորոած իմ թոքերը, ես բոլորը կը բացատրէի քեզ, որովհետեւ դրանից մի բան կը սովորէիր: Բայց գիտենալ իմ կուրծքի վրայ մի ծվատած տեղի պատմութիւնը, դա, կարծեմ, մի առանձին օգուտ չի բերի քեզ:

Ես աւելի վիրաւորոեցայ, ասելով.

— Դու միշտ համարել ես ինձ մի երեխայ, մի յիմար եւ տգէտ երեխայ, որի հետ, բացի կատակներից, ուրիշ բան չէ կարելի խօսել:

— Ես կատակ չեմ անում: Բայց դու այնքան խելացի էլ չես, որքան կարծում ես...